

**Փոխմարզպետ Նունե Մովսիսյանը մասնակցեց „Աղետների ռիսկի նվազեցումը Հայաստանում,, ծրագրի մեկնարկի հանդիպմանը**

Հոկտեմբերի 13-ին Փոխմարզպետ Նունե Մովսիսյանը մասնակցեց Եվրահանձնաժողովի Մարդասիրական օգնության եւ քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության Աղետներին նախապատրաստման ծրագրի (DIPECHO) կողմից ֆինանսավորվող „Աղետների ռիսկի նվազեցումը Հայաստանում,, ծրագրի մեկնարկի հանդիպմանը, որը կայացավ հոկտեմբերի 13-ին, Երեւանի Մարիոթ Արմենիա հյուրանոցում:

„ Դիմակայությունը կյանքի համար է: Մեծահասակ մարդիկ եւ աղետները,, զեկուցումով հանդես եկավ ԱՌՆԱՊ հիմնադրամի տնօրեն Մովսես Պողոսյանը, „Եվրահանձնաժողովի Մարդասիրական օգնության եւ քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության Աղետներին նախապատրաստման ծրագիր: Դիմակայություն, համայնքներ եւ դպրոցներ,, թեմայով ելույթներ ունեցան Հայկական կարմիր խաչի ընկերության Աղետների կառավարման եւ բնակչության տեղաշարժի բաժնի ղեկավար Եդմոն Ազարյանը, ՕԲՍՖԱՄ-ի ԱՌՆ ծրագրի պատասխանատու Զարուհի Տոնոյանը, Սեյվ դը չիլդրեն-ի հայաստանյան ներկայացուցչության ԱՌՆ ծրագրի ղեկավար Սերգեյ Սահակյանը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ԱՌՆ ծրագրի ղեկավար Տիգրան Թովմասյանը: